**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
10.08.2023 **թվականին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25-1 գնման պայմանագրի**

ք. Երևան «01» 02 2024թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի ժ/պ Հ. Մանուկյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՄՈՒԼՏԻ ԼԵՈՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Մելոյանի, (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 10.08.2023թ. կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և հաշվի առնելով, որ Գնորդի մոտ առաջացել է գնման առարկա հանդիսացող ապրանքների լրացուցիչ քանակի պահանջ, որի համար նախատեսվել են լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ «16112250» (տասնվեց միլիոն հարյուր տասներկու հազար երկու հարյուր հիսուն դրամ) ՀՀ դրամի չափով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի Հավելված թիվ 2-ով սահմանված մատակարարման ժամանակացույցով նախատեսված ապրանքների ձեռքբերման քանակները ավելացնել 10%-ով՝ համապատասխանաբար պայմանագրի գինը 10%-ով ավելացնելով, որը գումարային արտահայտությամբ կազմում է «16112250» (տասնվեց միլիոն հարյուր տասներկու հազար երկու հարյուր հիսուն դրամ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

1.1 Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն պայմանագրով Վաճառողի կողմից մատակարարված ապրանքի գինը» կազմում է «177234750» (հարյուր յոթանասունյոթ միլիոն երկու հարյուր երեսունչորս հազար յոթ հարյուր հիսուն դրամ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Պայմանագրի Հավելված թիվ 2-ով ներկայացված աղյուսակի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված «Ընդհանուր գումար/ՀՀ դրամ» սյունակի «161122500» ՀՀ դրամ գումարը համապատասխանաբար փոփոխել «177234750» ՀՀ դրամով:

1.3 10.08.2023թ.-ին Կողմերի միջև կնքված Պայմանագրի Հավելված N 3-ով ներկայացված վճարման ժամանակացույցը խմբագրել և հաստատել համաձայն՝ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

**2. Այլ պայմաններ**

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9

«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ

Հ/Հ 163078035496

ՀՎՀՀ 00875439

Տնօրենի ժ/պ---------------------Հ. Մանուկյան

/ստորագրություն/

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՄՈՒԼՏԻ ԼԵՈՆ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, Կոտայքի մ., Առինջ

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ

Հ/Հ 2470100846940000

ՀՎՀՀ 03521619

Տնօրեն ----------------------------Ա. Մելոյան

/ստորագրություն/

Կ.Տ

*Հավելված N 1*
*«10» օգոստոսի 2023թ. կնքված*
*N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25-1 ծածկագրով պայմանագրի*
*«01» 02 2024թ. կնքված*
*թիվ 2 համաձայնագրի*

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

ՀՀ դրամ

| | Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ.՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 09411710/543 | Սեղմված բնական գազ 1 | 177234750 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 177234750 |

ՀՀ դրամ

Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի հրապարակած, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:
Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա: Եթե արձանագրությունը կազմվում է փվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում:

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
| --- | --- |
| «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ | «ՄՈՒԼՏԻ ԼԵՈՆ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 | Հասցե՝ ՀՀ, Կոտայքի մ., Առինջ |
| «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ | «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 163078035496 | Հ/Հ 2470100846940000 |
| ՀՎՀՀ 00875439 | ՀՎՀՀ 03521619 |
| Տնօրենի ժ/պ----------------Հ. Մանուկյան | Տնօրեն ----------------Ա. Մելոյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ |

Արդշինբանկ

№ 1971-676

«22» 01 2024 թ.

ԵՐԱՇԽԻՔ N ՐԲԵՀ24/20-01
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՄՈՒԼՏԻ-ԼԵՈՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից 10.08.2023թ. կնքված թիվ N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25-1 պայմանագրով և դրա շրջանակներում կնքվելիք N 2 համաձայնագրով (այսուհետ երկուսը միասին նաև պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2.Երաշխիքով «Արդշինբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 4,833,675.0 (չորս միլիոն ութ հարյուր երեսուներեք հազար վեց հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ գումար (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելիս հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 163078035496 հաշվեհամարին՝ փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև 31.07.2024թ. ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին՝ գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25-1 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ վարկերի կենտրոնացված ձևակերպումների բաժնի պետ՝

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ «ARDSHINBANK» CJSC ԳԼԽԱՄԱՍԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ HEAD OFFICE 02566492 20424

Դավիթ Տարախչյան

Արդշինբանկ

№ 1971-675

«22» 01 2024թ.

ԵՐԱՇԽԻՔ N ՐԲԵՀ24/19-01
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՄՈՒԼՏԻ-ԼԵՈՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև 10.08.2023թ. կնքված Բենեֆիցարի կարիքների համար ապրանքի մատակարարման թիվ ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25-1 պայմանագրից և դրա շրջանակներում կնքվելիք N 2 համաձայնագրից (այսուհետ երկուսը միասին նաև՝ Պայմանագիր) բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Արդշինբանկ»ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 1,611,225.0 (մեկ միլիոն վեց հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ գումար (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 163078035496 հաշվեհամարին՝ փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև 31.07.2024թ. ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին՝ գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25-1 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ վարկերի կենտրոնացված
ձևակերպումների բաժնի պետ՝ Դավիթ Տարախչյան

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
«ARDSHINBANK» CJSC
ԳԼԽԱՄԱՍԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HEAD OFFICE
02566492 20424